



Հ. ԱՐԱՄՅԱՆ

Ս. ՄԵՍՐՈՊԻ ՇԻՐՄԻՆ ԱՌՋԵՎ

Սո՛ւրբ քստեղծիչ, Հայու հոգվույս ո՛վ հայր և մա՛յր,
Երև ըզբեզ փնտոեցի ես այս ֆարին տակ,
Ու բերի հոս զով ծաղիկներ և համբույր տա՛մ՝
Սոսկ բընագրո՛վ էր առիկա, անգիտաբար...

Ո՛չ, հոս չե՛ս դուն, այս կայֆին մեջ մեռելական,
Ո՛չ, հոս չե՛ս դուն, ընդհատակյա ֆարին ներև,
Գուն կյա՛նք ես բորբ, ո՛վ կենուցիչ, կենսապարզև,
Կյա՛նք տրոփուն՝ հավիտյանե՛ր ի հավիտյան...

Կը կարկաչե մեղրագետակ Հայոց լեզուն,
Այս լեռանց մեջ ու դաշտերուն հայրենական,
Ամենուրեք մեսրոպական լո՛ւյս տառեր կան,
Ամենուրեք Հայոց լեզվի բառե՛ր գեղուն...

Հավերժության դուն կապեցիր լեզուն Հայոց,
Հավերժակա՛ն դարձուց ըզբեզ ան իր կարգին,
Քեզ կը սիրենք որդիաբար ու կարողին,
Մեզ հետ ես դուն, միշտ ողջ, ինչպես լեզուն Հայոց...

Սո՛ւրբ քստեղծիչ, Հայու հոգվույս ո՛վ հայր ու մա՛յր,
Երև ըզբեզ փնտոեցի ես այս ֆարին տակ,
Ու բերի հոս զով ծաղիկներ և համբույր տա՛մ՝
Սոսկ բընագրո՛վ էր առիկա, անգիտաբար:

Եջական
1945 թ.